

Тексты и разысканія

по

Армяно—Грузинской филологіи

Книга VIII

ГОСУДАРСТВЕННЫЙ СТРОЙ ДРЕВНЕЙ ГРУЗИИ
И ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Томъ I

Изслѣдованіе П. ДЖАВАХОВА

Петербургъ 1905 г.

Նախ քան Հայաստանի քաղաքական կազմակերպութեան ուսումնասիրութիւնը, հեղինակն իւր յառաջարանի մէջ ասում է. — Ջրանդուելով այն շարուած կռուի պատմութեան ուսումնասիրութեամբ, որը տեղի ունէր IV և V դարերում Սասանեան կառավարութեան և նրա կողմնակից տեղացիներին և պարսկական քաղաքականութեան հակառակորդ հայ նախորարանների մէջ Հայաստանում, եւ համոզուեցի որ այդ կռուի իտական պատճառների պարզաբանութեան և այն ուղղութիւնը որոշելու համար, որ ընդունեց այդ կռիւը ամենից առաջ հարկաւոր է գիտենալ հին Հայաստանի պետական կազմը. այլապէս հնար չկար հասկանալու պատմագիրների նկարագրութիւնները, ինչպէս յայտնի է այդ արտաբերազմը մեծ տեղ ունի գրաւած եղիշէի և Ղազար Փարպեցու պատմութեանց մէջ: Թէ և հայ ազգի պատմական այդ շրջանը իրեն էր գրաւում մասնագէտների ուշադրութիւնը, այնուամենայնիւ նրանց եղած դէպքերն աւելի կամ պակաս մանրամասնութեամբ հաղորդելուց այն կողմ չէին անցնում և այդ առաջ էր գալիս անպատճառ, որ առանց որոշ յենակետի չէր կարելի ըմբռնել պատմաբանների հաղորդածը: Սկսեմք թէկուզ հէնց նրանից, որ եղիշէն պատմական այդ շրջանը նկարագրում է որպէս կրօնական պատերազմ, որ իբր թէ խնդիրը քրիստոնէութեան և Մազդեզական կրօնին էր վերաբերում, որ ապուամբ խմբի մէջ յղած նախարարները մտածում էին միայն հոգու լիրկութեան մասին և սաղմոսները ձեռքերին, աղօթք մըմնջալով սուրբ խոտովանողների նման, ձգտում էին յաւիտենական կենաց: Կրօնական մօտիւն ու կերպարանքը

գլխաւորապէս յատուկ է եղիշէին, մինչդեռ Ղազար Փարպեցին գործն այլապէս է պատկերացնում. թէ՛ և ըստ Փարպեցու էլ այդ կռիւը որոշ չափով կրօնական գոյն ունի, բայց և այնպէս նրա հաղորդած գէպքերն այնպիսի մանրամասնութիւններ ու մօտիւններ ունեն հայ ապստամբների և պարոնիական իշխանութեան ընդհարումները, որ նրա պատմութիւնն ուշադիր ուսումնասիրողի համար կռուի կրօնական պատճառներն այլ ևս միակ և բացառիկ առիթ չեն ներկայացնում այդ պատմական գէպքերի. բայց ո՞վ է արդարը, ո՞վ աւելի ուղիղ է հաղորդում փաստերը, պատմաբաններից ո՞վ աւելի ուղիղ է լուսաբանում գէպքերը: Պարզ է, որ մեզ հետաքրքրող խնդիրը լուծելու համար պէտք է տեղեկութիւն ունենալ երկրի ընկերվարական կազմակերպութեան մասին. որովհետեւ երբ մենք կը պարզենք հայկական կեանքի կազմակերպութիւնը և ապա սասանեան քաղաքականութիւնը գէպի հպատակ ազդութիւնները, այն ժամանակ ընդհարման և կռուի պատճառները և այն ուղղութիւնը, որը նա կարող էր ընդունել ընկերվարական պայմանների շնորհիւ, զգալի չափով կը պարզուի մեր առաջ: Ահա այս հանգամանքը ստիպեց ինքնուրոյն կերպով ուսումնասիրել հին Հայաստանի պետական կազմակերպութիւնը: Գիտնական հեղինակի յառաջաբանի այս կտորը մենք ամբողջութեամբ առաջ բերենք, նախ նրա համար, որ ցոյց տանք, թէ ինչն է ստիպել նրան զբաղուել հին Հայաստանի պետական կազմակերպութեամբ և երկրորդ առանձին գոհունակութեամբ շեշտելու, որ մենք ունենալու ենք շուտով մեր առաջ նրա մի այլ հեղինակութիւնը, որով պէտք է լուսաբանուեն այն պատճառները, որոնք առիթ եղան հինգերորդ դարու պատերազմի և բաժանեցին հայ նախարարներին երկու բանակների: Այս խնդրի լուսաբանութիւնը շատ մեծ նշանակութիւն պէտք է ունենայ անշուշտ մեր անցեալ պատմութեան մթին էջերի լուսաբանութեան համար և ամբողջ սերունդների մէջ առաջ պէտք է բերի նոր հայեացք, մինչդեռ մեզ միշտ ուսուցել են, որ V-դ դարու մեծ պատերազմը մի միայն կրօնական և կրօնի պաշտպանութեան համարէր: Բայց սպասելով այդ հետաքրքիր աշխատութեան հրատարակութեան, անցնենք մեր առաջ դրուած գրքի: Հեղինակը թուում է, թէ ովքեր են փորձել փաք ինչ լուսաբանել հին Հայաստանի ընկերվարական կազմակերպութիւնը: Առաջին փորձն արել է Ինճիճեանը իւր «Հնախօսութիւն աշխարհագրական հայաստանեայց աշխարհի» գրքում. միւս փորձի նոյն ուղղութեամբ արել է հայագէտ Վ. Լանգլուան իւր «Essai historique et critique sur la constitution sociale et politique

de l'Arménie sous les sois de la dinastie roupenien», որի առաջին մասում «Condition sociale et politique de l'Arménie avant les Reupeniens» չորս մեծագիր էջերին աշխատում է պարզել Հայաստանի ընկերվարական կեանքը 12 դարերի ընթացքում, հրկնելով Մովսէս Խորենացու խօսքերը Վաղարշակ թագաւորի գործունէութեան և ցեղերի արժանեաց աստիճանների կարգաւորութեան մասին, որ և շարունակուեց մինչև չորրորդ դարու վերջը, որից յետոյ եղաւ հինգերորդ դարու պատերազմը և երկիրը բաժանուեց երկու մասերի՝ յունական և պարսկական և ըստ այնմ էլ փոխուեց վարչական ձևը: Լանդլուայի աշխատութիւնը յարգելի Ջաւախովը գտնում է թերի, որովհետև նա կուրօրէն հաւատում է իւր աղբիւր հեղինակին և բերում է այնպիսի տեղեր և կարծիքներ, որոնց անհիմն լինելը բոլորովին ակնհայտ է: Ապա յիշում է, որ նոյն խնդրի մասին կայ նաև Ալիշանի աշխատութիւնը «Այրարատի» մէջ «Դուռն Հայոց արքունեաց» վերնագրով գլխի մէջ: Փանում է, որ հայր Ալիշանը որոշ չափով աւելի առաջ է գնացել Լանդլուայից, որովհետև նա զանազանում է յաջորդական կարգաւ հին Հայաստանի սօցիալական կազմակերպութեան զարգացման շրջանները (մինչև 4-դ դար, սասանեան, բիւզանդական, արաբական և կիլիկեան): Լանդլուայի և հ. Ալիշանի հիմնական սխալը հեղինակը գտնում է նրանում, որ նրանք Խորենացու պարզամիտ պատմութեանը Վաղարշակի մտքած ցեղական և վարչական կազմակերպութեան մասին հաւատացել և նրա վրայ են հիմնել իրենց ուսումնասիրութիւնը, կարևոր չըգտնելով դիմել ուրիշ աղբիւրներին: Պարզ է, որ Վաղարշակի մտքած պետական կազմը հետևանք պէտք է լինէր ժողովրդի երկար պատմական կեանքի, նրա հասարակական կազմի հետևողական զարգացման (էպօլի-ցիայի) և անկասկած գոյութիւն չէր կարող ունենալ այն ժամանակներում, երբ ըստ սովորական ենթադրութեան ապրած պէտք է լինէր Վաղարշակը: Բաւարար բացատրութիւն գտնել հին Հայաստանի պետական կազմակերպութեան մասին և Պարաշանի «քննական հայոց պատմութեան» մէջ, նոյնպէս չի կարելի: Դեռ աւելի վատ. հեղինակը թէև դիտաւորութիւն ունի քննադատաբար վերաբերուելու պատմական աղբիւրներին, սակայն նրա մակերևութական երեւիացութիւնը արեւելեան բռնապետութեան մասին՝ աւելի է բարդում և մթնեցնում Հայաստանի պետական կազմի հասկանալու խնդիրը:

Վերոյիշեալ փորձերի ապարդիւնութիւնը գլխաւորապէս նրանով է բացատրւում, որ հետախուզողներն իրենց հաշիւ չէին տալիս նախ՝ թէ ի՞նչ նիւթերից պէտք էր և կարելի էր

ուսումնասիրել Հայաստանի սօցիալական կազմակերպութիւնը և երկրորդ՝ ինչպէս պէտք էր մերձենալ հարցի լուսաբանութեան: Քանի որ ուսումնասիրողները կը շարունակեն մի որ և է պատմագիրն առանձին յիշեալ խնդիրն ուսումնասիրելու համար, երբէք որոշ հետեւանքի չեն հասնիլ. բայց զրանից միայն զանազան անուանց մեքենայական անունների ժողովածուներով պաշտօնական անձերի և ցեղերի մասին՝ թէկուզ բոլոր պատմագիրներից քաղուած գործն առաջ չի երթայ: Ամենից առաջ ընագիրը (տեկստը) պէտք է հասկանալ այնպէս, ինչպէս որ հասկանում էին իրենց ժամանակ պատմութիւն գրողները հէնց գրելու ժամանակ. այսինքն պէտք է պարզել թէ նրանք պաշտօնների և ցեղերի զանազան անունների տակ ի՞նչ էին հասկանում. օրինակ ի՞նչ էին ընդունում նախարար, տանուտէր, ի՞նչ մեծութիւն էր նրանց համար սեպուհը և այլն և այլն: Երբ պատմագիրը գրում էր իւր աշխատութիւնը, ակներև է, որ նա ինչ ժամանակ էլ ապրելու լինէր, նա պարտաւոր էր այսպէս կամ այնպէս երևակայել իւր յիշատակած պաշտօնեաներին և զանազան դասակարգերի անդամներին: Ամենից առաջ պէտք է որոշել և վերականգնել այդ հասկացողութիւնը. պէտք է որոշել թէ ինչ էր հասկացնում տանուտէր, նահապետ, տուն և այլ բառերի տակ: Եթէ վերոյիշեալ խուզարկուները փորձէին կատարել այդպիսի մի աշխատանք թէկուզ մի պատմագրի վերաբերութեամբ, նրանք միանգամից ոտքի տակին հող կը դրային և նրանց ուսումնասիրութիւնը չոր ու ցամաք անունների և դարձուածքների շարքերից հասարակական կազմակերպութեան փոքր ի շատէ կենսալի պատկեր կը ստանար: Բայց այդպիսի աշխատանքը մի պատմագրով չը պէտք է սահմանափակուի. նա առաւել բեղմնաւոր և կանոնաւոր եղբակացութիւնների հասնելու համար՝ պէտք է միւսնոյն ժամանակ աչքի անցկացնել և ուրիշ պատմական յիշատակաբաններ և այն՝ համեմատականօրէն, բայց զրանից հին յունական հեղինակները՝ Լերոդօտի, Քսէնօֆոնի և Ստրաբօնի տեղեկութիւններից՝ մանաւանդ պէտք է օգտուել: Տարբարողաբար այդ հեղինակներն Հայաստանի մասին այնպիսի արժէքաւոր և վճռական տեղեկութիւններ չեն տալիս, որքան Վրաստանի մասին. բայց և այնպէս նրանց տեղեկութիւնները՝ որպէս ականատեսների, որոնք եղել են Հայաստանում, որոշ գէպքերում կարող են եղբակացութեանց համար ուղեցոյց ընթացք տալ: Հայաստանի քաղաքական կեանքի այս ձևով ուսումնասիրութեան ժամանակ միայն կարելի կլինի հասկանալ վարչական և դասակարգային այն բազմաթիւ տերմինները, որ տեղական պատմագիրները գործ են ածում իրենց

գրած պատմութեան մէջ: Վրաստանի հասարակական կազմակերպութեան հետազոտութիւնն ու նախնական ծանօթութիւնը եւ Հայաստանի հասարակական կազմակերպութեան մասին ստացուած հետեւանցների ուսումնասիրութիւնն ու նրանց համեմատութիւնը Վրաստանի կեանքի նման հետեւանցների հետ, հնարաւորութիւն տւին շատ բան պարզելու եւ գնահատելու համապատասխան տեսակէտից:

Առաջինը, որ հեղինակը Հայաստանի հասարակական կազմակերպութիւնն ի նկատի առնելիս աչքի առաջ է ունեցել երեք պատմական աղբիւրներ՝ Փաւստոս, Ղազար Փարպեցի եւ Եղիշէ: Նա յիշում է «Ղազար Փարպեցու ձեռագրերի» տեսութիւն դ. Գալուստ Տէր Մկրտչեանի, առաջ է բերում նրանց թերութիւնները, նրանց համեմատական նորութիւնը եւ անկատար ու հին՝ այժմս անյայտ ձեռագրից ընդօրինակած լինելը եւ այնուհետեւ անցնում է ուսումնասիրութեան:

«Հետաքրքիրն այն է, որ յիշեալ պատմագիրները խիստ կերպով տարբերուում են իրարից իրենց գործածուած եւ սովորական տերմիններով: Ղազար Փարպեցին հայ ցեղապետներին ամենից յաճախ կոչում է «սանուսեր», աւելի սակաւ—«իւխան» եւ երբէք նահապետ չի կոչում. իսկ Փաւստոսն ընդհակառակն—նրանց կոչում է նահապետ. միայն նա է այդքան յաճախ գործածում յիշեալ տերմինը: Եղիշէն նախապատուութիւն է տալիս նախարար եւ իւխան կոչումներին եւ համարեա երբէք սանուսեր բառը գործ չի դնում: Ակնհերե է, որ նոյն պաշտօնի վերաբերութեամբ այսպէս խիստ տարբեր անունների գործածութիւնը իւր խորունկ իրական հիմունք ունի»: Մասնաւոր է լինում եւ այն երեւոյթի վրայ, որ նոյն պատմագիրները երբեմն փոփոխում են նոյն պաշտօնի համար գործածած տերմինները եւ այդ հանգամանքը վերագրում է աւելի շուտ ընդօրինակողներին, քան հեղինակներին, մասնաւոր միաբանի յիշեալ յօդուածից յետոյ: Նեշտելով, որ պատմագիրները շատ քիչ նիւթ են տալիս Հայաստանի հասարակական պետական կազմակերպութեան մասին եւ առաւելապէս նկարագրում են պատերազմական գործողութիւններ եւ եկեղեցական շահեր գտնում է, որ հնարաւորութիւն չկայ բոլոր ընկերվարական հիմնարկութիւններն ուսումնասիրելու, որ մի քանի խնդիրների վերաբերութեամբ միօքը ի շատէ իրական ենթադրութիւններով պէտք է բաւականանայ, որովհետեւ այդ ենթադրութիւններն հիմնուած են պատմագիրների կցկտուր եւ պատահամբ յիշուած տերմինները վրայ:

Հեղինակի ներկայ աշխատութիւնը վերաբերում է մի միայն հին Հայաստանի պետական կազմակերպութեան, միայն տեղական ընկերվարական հիմնարկութիւններին, պարսիկներից կամ յոյներից փոխ առած հիմնարկութիւններին, Հայաստանի վերաբերութեամբ նրանց քաղաքականութեան և նրա ազդեցութեան մասին ժողովրդի հասարակական կազմակերպութեան վրայ համարեա շօշափուած չեն և կարող են առանձին ուսումնասիրութեան նիւթ դառնալ:

Մենք պ. Ջաւախովի յառաջաբանը համարեա ամբողջովին առաջ բերինք թարգմանաբար նախ ցոյց տալու նրա նոր կարծիքը հինգերորդ դարու մեծ պատերազմի մասին, որ նա միայն հրօնական պաաճառներից չի առաջ եկել. երկրորդ ցոյց տալու նրա իրաւացի կարծիքն ու գնահատութիւնը Հայաստանի սօցիալական կազմի ցայտօր կատարուած ուսումնասիրութեան մասին և երրորդ՝ ցոյց տալու այն ուղին, որով նա առաջնորդուել է յիշեալ աշխատութիւնը գրելիս:

Այժմ անցնենք բուն նիւթին:

Յարգելի գիտնականի կարծիքով Հայաստանի պետական կազմակերպութեան «սաղմը», որով ապրել է դարերի ընթացքում հին Հայաստանը և որի վրայ է հիմնուած եղել նրա հասարակական կեանքը, պահպանուել է բաւականաչափ պարզ կերպով: Այդ սաղմն է «տունը»:

Տուն բառը հանգիստանում սաղմ, հիմք որպէս հառարապական, այնպէս էլ աշխարհագրական բաժանման:

Տուն բառը նշանակում է արենակցական կապերով կապուած մարդկանց խումբը:

Այս միտքն ապացուցանելու համար բերում է օրինակներ Փաւստոսից, Ղազար Փարպեցուց:

Նոյն բառը նշանակում է ընակեցրած շինութիւն. (դարձեալ օրինակներ) նոյն բառը նշանակում է և երկիր, որի վրայ ապրել է ընտանիքը, բայց ցոյց է տալի այն կալուածքը, որի վրայ ապրել է ընտանիքը կամ ցեղը: (Ապացոյցներ):

Տուն բառը գործ է ածուել և այն դէպքում, երբ խօսք է եղել որ և է ձորի կամ շրջանի մասին:

Տուն նշանակում էր նաև գաւառ կամ շրջան, որը գտնւում էր որ և է անձի վարչական իրաւասութեան ներքոյ:

Հետզհետէ «տուն» բառը ստանում է ամբողջ երկրի, նոյն իսկ ամբողջ պետութեան:

(Առաջ են բերուած փաստեր):

Ուրեմն «տուն» նշանակում էր ընակարան, ընտանիք,

կաշուածք, գաւառ, և վերջապէս երկիր: Աշխարհագրական բոլոր բաժանմունքներն ամենափոքր մասից սկսած մինչև երկրի նման մեծ մասը՝ նոյն անունն էին կրում: Այս միութիւնն ու որոշ սիւստեմի խիստ հետեողականութիւնը աշխարհագրական բաժիններ անուանելիս, ցոյց է տալիս այդ ձևի բաժանման նախնական դրութիւնը. նա արտայայտիչ է այն դրութեան, երբ նախնական կազմակերպութիւնը հզօրապէս պահպանւում էր, արտաքին ազդեցութեան չէր ենթարկուել. երբ լեզուն դեռ բաւականաչափ հարուստ չըլինելով, մի քանի նման հասկացողութիւնների համար նոյն բառն էր գործածում: Այնքան է, որ այդ ժամանակներում ընկերվարական կազմակերպութեան հիմքն էր կազմում տունը և նրանից դարգացաւ հասարակական յաջորդ կազմակերպութիւնը:

Այնուհետև հեղինակը բացատրում է, որ երկիրը երբեմն բաժանւում էր ըստ տեղագրութեան՝ «ձոր»երի: Օրինակ Աղ-նուածոր, Սանոձոր, Առուենից ձոր, Ջերմաձոր: Անձախածոր, Վայոցձոր, Բերդաձոր, Գարգմանայձոր, Հրսիձոր:

Այնուհետև բաժանւում էր գաւառների, աշխարհների և երկրի:

Հէր և Ջարաւանդ գաւառ.

Մարդպետ ի գաւառ Տարօնոյ. յիւրում գաւառին ի Տայս և այլն:

Սակայն պատահում էին գաւառներ, որոնք կոչւում էին իշխող նախարարական տան անունով:

Թագաւորն Արշակ հրաման տայր յԱրշարունեաց գաւառին շինել. եւ եղև իրբև ի վերայ հասանէր իրացն Անդովի նահապետն Սիւնեաց:

Աշխարհագրական աւելի մեծ միութեան նշանակութիւն ունէին երկիր և աշխարհ բառերը: Երկիր բառը յաճախ գործ է ածուել ամբողջ Հայաստանի նշանակութեամբ, մինչդեռ նոյնը չի կարելի ասել աշխարհի մասին:

... յայսմ տեղոջ ոչ միայն ի վերայ ազգաց և աշխարհաց. (եղիչէ. 83 երես) իշխանութիւն աշխարհաց հայոց մեծաց. Փաւստոս.

Իսկ երբ պատմագիրը ցանկանում էր գործածել այդ բառը ամբողջ երկրի մտքով, աւելացնում էր ամենայն բառ. օր. արխարհ ամենայն.

Պարսպապատ տարածութիւնը հայերէն կոչւում էր քաղաք և այդ բառը պահպանել է իւր նախնական նշանակութիւնը:

... «զամենայն էրէս և զգազանս հրամայեաց ժողովել և լնուլ քաղաքորման, զի լիցին նոցա տեղիք որոց» (Փաւստոս III. ք): Պարզ է, որ այս դէպքում քաղաք բառը այն մտքով չէ գործածուում, ինչպէս այժմս հասկանում ենք:

Հեղինակը կարծում է, որ քաղաք ասելով հսկերում հասկացւում էր ամրոց, և երկիրը բաժանւում էր այդ մանր պաշտպանողական միութիւնների իրենց շրջապատող գիւղերով: Բերելով եղիշէից մի օրինակ, ենթադրում է, որ բացի պաշտպանուելու հնարաւորութիւնից և պատճառից, գիւղերն առանձնապէս խմբւում էին այդ տեսակ կեդրոնների շուրջը և անտեսական հանգամանքներից: Քաղաքների մասին հին հեղինակներով պ. Ջաւախովը դժուարանում է որոշ գաղափար տալ, որովհետև նոյն հեղինակը օրինակ Արշակուանը և քաղաք է կոչում և աւան և գիւղաքաղաք: Այնուհետև կանգ է առնում քաղաքների անուանց կազմութեան վրայ և ցոյց տալիս, թէ ինչպէս հայերէն քաղաքների անունները կազմւում են կերտ, շատ, աւան և ապառ մասնիկների յաւելումով. օր. Տիգրանակերտ, Ադամակերտ, Երուանդակերտ, կերտ բառը Պահլաւերէն նշանակելով շինած, կարող է և գործ է ածւում թէ քաղաքների և թէ գիւղերի համար: Շատ վերջաւորութեամբ՝—Արտաշատ, Երուանդաշատ: Աւան վերջաւորութեամբ՝—Արշակաւան, Ջարեհաւան, Նախճաւան: Ապաս վերջաւորութեամբ՝—Աղարշապատ: Այսպէս ահա քաղաքների անունները ցոյց են տալիս օտար ազդեցութիւն՝ ասորական և հին պարսկական: Գիւղի համար հին հայերէնում գործ է ածուել երկու բառ՝—գիւղ և աւան՝—Բագաւան, Նախճաւան և այլն: Աւան և գիւղ բառերը մի և նոյն նշանակութիւն ունին. իսկ գիւղաքաղաք միջին անցողական մեծութիւն է՝—այն է գիւղից քաղաք անցնող միջին մեծութիւն: Բերդ և ամուր գործ են ածւում որպէս ամրոցներ, սակայն նրանց կազմակերպութեան մասին պատմաբանները ոչ մի կանոնաւոր տեղեկութիւն չեն տալիս. միայն յայտնի է, որ տանուէրերից իւրաքանչիւրը իրեն համար ամրոց ունէր:

(Շառունակեղի).

Ե. Տ. Վ. Մ.